ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսի վերջին խռովութիւններն անդրադարձան գաւառները և ինչպէս քանիցս գուշակել էինք մենք, անդրանիկ զոհը դարձեալ անպաշտպան հայերն եղան։ Վերջին հեռագիրները գուժում են, որ Ադանայում, Մարաշում և շրջակայքում ժոլեռանդ ամբոխն սկսել է հայերին ջարդել, որոնցից առ այժմ յայտնի է, սպանուած են 400 հոգի, թէպէտ մի այլ հեռագիր այդ թիւն հասցնում է 5000 հոգու։ Հայկական ջարդ է եղել նաև Բաղէշի Խանկաճոտ գիւղում, ուր սպանուած են 14 հոգի։ Տաճկաստանի դանազան անկիւններից անհանգստացնող լուրեր են տեղում լրագիրներին նաև Բաբերդի, Մշի և միւս տեղերի հայերի դրութեան վերաբերմամբ, երկիւղ են կրում նորանոր ջարդերի։ Իսկ Կ. Պոլսի ճրճռան սահմանադրութեան երջանիկ անդամները հրճւում են իրանց գործունէութեամբ։ Իսկ Կ. Պոլսի հայ լրագիրները քիչ է մնում միմեանց դատարան քարշ տան։

Տաճկաստանի վերջին խռովութիւնների պատճառով, ինչպէս հեռագիրները հաղորդում են, սուլթանը մտադիր է հրաժարուել իւր գահից։

Ղուկասեան մրցանակաբաշխութիւնը յետաձգուած է 2 ամսով, ներկայացուած աշխատութեանց քննադատութիւնների ուշանալու պատճառով։

Русское знамя լրագիրը յայտարարելով, որ հայերն ուզում են անջատուել Ռուսիայից և ի դէմս Կորիւն վարդապետի վերագրելով այն հայ վարդապետներին, առաջարկում է՝ հայ մութ ոյժի դէմ դնել մի ուրիշ մութ ոյժ—թուրքերին։ Հետաքրքրականն է՝ մտածում են արդեօք հայերը պատասխանել այդ միջնադարեան լրագրին թէ ոչ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Երևան. Մ. Ենգ.—Ձեր նամակը ուշ ստացանք. կտպուի հետևեալ համարում։

Սմրղանդ. Mars-ին.—Ձեր նամակին կպատասխանենք։

Կ. Պոլիս. Մ. Ա. Օ.—Խնդրում ենք ուղարկել շարունակութիւնը։

Վենետիկ. «Բազմավէպի» խմբ.— Ստացանք «Մուրացանի» յօդուածը։ Ձեզ առանձին նամակ գրեցինք։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ